

8905

Իր Դր Լիւս
Լուսնայ արք

281.64

p-26

04 NOV 2009

ԻԶՄԻՐԼԵԱՆ

ՆԱՄԱԿԱՆԻ



Ի. Զ. Ն. ՊԵՐՄԵՐԵԱՆ — Ա. ԶԱՏԷԱՆ
ԳԱՆԻՐԷ, 1911

92

Ի - 26

281.69
-26
հ-26
այ.



ԻԶՄԻՐԼԵԱՆ

ՆԱՄԱԿԱՆԻ

Handwritten vertical text in blue ink, possibly a signature or reference number.



ՏՊԱԳՐ. ԶԱՐԵԶ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ
ԳԱՏԻՐԷ, 1911

26 APR 2013


8905



5000
47



Handwritten signature in blue ink



✠ **Տ. Տ. ՄԱՏՔԷՆՍ Բ. Ա. ԿԱՅՈՂԻԿՈՍ**
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
(1845-1910)

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Շատեր յազգայնոց փափաք կը յայտենն ունել լիակատար կենսագրութիւնն ազգիս նորոգ վախճանեալ Հայրապետ Տ. Տ. Մատթէոս Բ. Արքայան Կարողիկոսի :

Սոյն կենսագրականին մեջ պիտի պարզուիցն Նորին Ա. Հայրուրեան Ազգային Կեդրոնական Ժողովներու անդամակցութեան եւ նախագահի պատեններ՝ զոր վարած է սարիներով, Ոսկիսար Նոր Թաղի Ա. Կարապետ Եկեղեցւոյ քանաւեայ քարոզչութեան եւ ձեմարանի երկսեռ ուսանողներու եւ ուսանողու հետց իմացական եւ բարոյական յառաջդիմութեան նախանձելի ժամանակներ, Եգիպտոսի Հայոց քանաւեայ Առաջնորդի, Երկիցս Կ. Պոլսոյ Պատրիարքի եւ հուսկ ուրեմն ամենայն Հայոց Ընդհանրական Կարողիկոսի հանգամանքներով կատարած գործերուն պատմութիւնն եւ իբրեւ անորական աստեղիկու սարիներու քառապանքի օրերը՝ զորս կրեց ի Սուրբ Երուսաղէմ :

Յիշեալ կենսագրութեան մեջ իբր ի հայելոջ պիտի պատկերին Նորին Ա. Օծուրեան գերագոյն

բարոյականն, ուղղամտութիւնն, եկեղեցասիրութիւնն եւ հայ ազգին համար կենսական կարեւորութիւն ունեցող եւ նորա հակասագրին վրայ մեծապէս ազդող գործերն ու խնդիրներ՝ որոնց մեջ իբրեւ Պատրիարք Կ. Պոլսոյ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց ինքը մեծագոյն դերն ունեցած է:

Յրանաւորն Հայրապետը բնիկ Պոլսեցի Գում 'Իսպուլի դուրս Ազգային Վարժարանին մեջ աւակներս է ինձ 1858 և մինչ 1864, Սիմոն դերձակ Համբարձումեան անունով. ի վերջոյ՝ զարգացման պահուն վերածած եմ զայն Սիմոն Հ. Իզմիրլեան մականունի. ուսումն աւարտելուն շուկան գործի դրած եմ. շաբաթ մը վերջը Բաշեմէ դժոխք անունը սալով շուկային, ընդգրկեց կոչումն եկեղեցական: Այսպէս թէ աշակերտ եւ թէ իբր որդի մինչեւ վերջին օրերը մտերիմ բարեկամ սեսնուելու բաղդն ունեցեւ եմ եւ այս առթիւ մեստեւ յարաբերութեան մեջ զտնուած եմ իր հետ. յանախ զմայլում կ'ազդէին յիս նորա գերագանց յասկութիւններն՝ որոնք շատ հազուադէպ են նոյն իսկ ամենաբարձր զարգացում ունող եւ անենամեծ ազգերու պատկանող հոյակապ անձնաւորութիւններու վրայ, ինչպէս որ նոյն իսկ օտարազգիներ խոստովանեցան Նորին Ս. Օծուրեան մանէն յառաջ եւ յետոյ: Սոյն պարագաներուն մեջ բնապան էր որ մեր վաղեմի ուշիմ աշակերտին լիակատար կենսագրութիւնը պատրաստուած եւ հրատարակուած տեսնելու ջերմ տենչացողներէն լինէի առաջինը. իմ այս իդր հայտողեցի սիրելի բարեկամիս, 'Գահիրէի Հայոց Առաջնորդարանի դիւանապետ Տիար Նազա-

րէթ Մ. Աղազարմի՝ որ Իզմիրլեան Սրբազանի Եգիպտոսի Հայոց առաջնորդութեան բովանդակ շրջանին մեջ Առաջնորդարանի դիւանապետ եւ Ազգային Վարժարանի տնօրէն եղած է եւ մինչեւ վերջ Նորին Ս. Օծուրեան լիովին վստահութիւնը կը վայելէր, որպէս զի ինքը պատրաստ կենսագրութեանը այն մասն՝ որ կը վերաբերի Եգիպտոսի առաջնորդութեան. բայց Տ. Աղազարմ պատասխանեց առ իս թէ իր ծանր ծանր զբաղումներ եւ առողջական վիճակ դժբաղդօրէն չէին թոյլ տար զբաղելու իրեն արտին շատ մօտիկ այդ գործով:

Սակայն ես հանգուցեալ Հայրապետէն եւս լսած լինելուս թէ ինքն Եգիպտոսի առաջնորդական պատճառովարութեան բուականէն սկսեալ զանազան տասակէներով շահեկան քրոսակցութիւններ ունեցած է Տիար Աղազարմի հետ, այս վերջինէն խնդրեցի որ իմ տրամադրութեան տակ դնէ այդ նամականոյ ծրարներ, յորոց այն մասեր որք կ'արտայայտեն վեհ եւ ազնիւ զգացումներ հանրային խնդիրներու վերաբերմամբ եւ Նորին Ս. Օծուրեան հեղինակաւոր հայեացքն ու կարծիքներ կը պարզեն եւ կամ հանրային մարդը կը բնագոյնէն կամ կը զննատեսեն, արժան դասեցի հրատարակութեան կրկին նկատումներով: Առաջին՝ այդ նամականոյ վսեմ պարունակութիւնը կը լինի աշխարհիկ եւ եկեղեցական ընթերցողներու համար ներշնչարան ազգասիրութեան, ուղղամտութեան եւ գործունեութեան. երկրորդ՝ եթէ զտնուելի ոք մտադիր պատրաստելու Իզմիրլեան Սրբազանի լիակատար կենսագրութիւնը, նորա գործնատեսին մը դիւրացուցած կ'ըլլայ:

Մանաւանդ որ Տիար Աղազարմ իմ խնդրանքի վրայ յանձնառու եղաւ նամակներու մէջ ակնարկեալ կարեւոր դիպաց եւ խնդիրներու մասին համառօտ, այլ շահեկան ծանօթութիւններ աւելցնելու նոյն քղքերուն ստորեւ :

Ի վերջէ Տիար Ն. Աղազարմ Նորին Ս. Օծուքեան Նամականոյ մէջ՝ զորս վերադարձուցի առ ինքն, առ համեսութեան կ'ուզէր իսպառ զանց ընել իրեն համար եղած գնահատական տողերն, այլ ես վերցուցի միայն այն հատուածներ՝ ուր խօսքը կ'ուղղուէր իրեն իբրեւ սոսկական մարդու. սակայն արդար եւ արժան դասեցի հրատարակել մաս մը միայն բազմաթիւ տողերէն՝ որոնցմով Երջանկայիտեան Հայրապետն իր պէս պէս նամակներու մէջ կը գնահատէ Տիար Աղազարմն իբրեւ Փահիրէի Առաջնորդարանի եւ Ազգային վարժարանի պատօտեայ :

Նամականոյս վերջ ի՛նչ ի՛նչ նկատուներով տպուած է նաեւ Ն. Ս. Օծուքեան օրհնամար Կոնդակը, զոր շնորհ բրած է ուղղել մեզ մեր ամուսնութեան քառասունեկին առթիւ :

Արդեւ Ն. Ս. Օծուքեան մօտէն ծանօթ եւ անոր վերայ հիացող եզրապատի ազգային մը սոյն հրատարակութեան ծախքը հոգացած է իր անձնական զբաղանքէն . վանառման ամբողջ արդիւնքը պիտի յանձնուի բարի նպատակի մը, որ պիտի յայտարարուի ազգային մամուլի միջոցաւ՝ այս նամակներու հրատարակելու ատեն :

Ազգ. վարդապետ Ռուսուցիչ-Գասխարակ
եւ Յիսուսայ Գարոցատե
ՄԿՐՏԻՉ Ս. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

Փարիզ, 7 Ապրիլ 1911

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Կ. Պօլիս, 5 Սեպտեմբեր 1889

Ազնիւ երիտասարդ,

Շնորհակալութիւն այն տեղեկութեանց համար, զոր տուած էիք ի մասին ազգային գործոց :

Յուսալից եմ որ Ձեր կատարած փոքրիկ օգտօրէնութիւնն օգտակար եղած է Ձեր ապագէն խոնջեալ մարմնոյն, գիտեմ քաջատու շատ աշխատած էք և այն կատարեալ անձնութեամբ. ես իսկ շատ հոգնեցուցի զՁեզ, սակայն ազգին գործոց համար, Հայ ազգին, զոր այնքան կը սիրէք, ինչպէս կը սիրեմ և ես : Կը մաղթեմ որ բարերարն Աստուած իր ամենազօր Աջն հովանի և պահպան ընէ Ձեր վրայ, և կատարեալ առողջութիւն պարգեւէ Ձեզ, ազնիւ և պատուական երիտասարդ : Ձերմագինս կը յանձնարարեմ Ձեզ որ շարունակէք սիրել տառապեալ Հայ ազգն և Հայաստանեայց ընդ միշտ մարտիրոս Առաքելական եկեղեցին :

Սիրելի Աղազարմ,

Նեղոսի արիւնքն (*) այլ եւս ինձ համար չ'են, դուք և ամենայն ողջամիտ Հայք Եգիպտոսի գիտեն թէ ինչպէս ապրեցայ յԵգիպտոս, առողջութիւնս գրեթէ բոլորովին խանգարուեցաւ, Եգիպտոսի կլիման կ'սպառնայ ժամանակէն առաջ առաջնորդել զիս ի գերեզման, զոհողութիւնը կարեւորին և բացարձակ պէտքին համար է միայն, ուստի պէտք է համոզուիք և համոզէք այլ եւս որ ինձ համար չ'է Եգիպտոս:

(*) Իզմիրլեան Նեղոսի արիւնքն առաջին անգամ ողջունած է 1886 Մարտ 4/17ին: Փարաւոնեան աշխարհի կլիման աննպաստ եղաւ իր առողջութեան ու այս պատճառով իր պաշտօնավարութեան շրջանին զուգադիպող հինգ ամառներուն երեքը Պօլիս անցնելու ստիպուեցաւ:

Ն. Մ. Ա.

Սիրելիդ իմ Պ. Աղազարմ

Աքանչացուց զիս Ձեր տողերուն վաւիկութիւնն, որք Ձեր անկեղծ զգացմանց արտայայտութիւններն են, բայց ի վեր անդրքան զիմ արժանիս էին Ձեր այն տողեր, որք իմ անձին կը վերաբերէին, այս ալ Ձեր ջերմ սիրոյ արդարութիւնն է, տարակոյտ չունիմ և շնորհակալ եմ:

Վերստին պիտի կրկնեմ որ ոչ եւս է Եգիպտոս ինձ համար ինչ պայմաններու ներքեւ ալ լինի, ուստի փութացիր համոզել և պատրաստել մտքերը ընդունելու համար հրաժարականս, և արդիւնքն հազորդէ ինձ որպէս զի փութացնեմ հրաժարականս. Ձեր բարեկամութենէն կ'սպասեմ այս, և հաւատք ունիմ թէ Պ. Աղազարմը կը սիրէ Իզմիրլեանն և նորա խնդիրը կը կատարէ. կ'սպասեմ:

Պատ. Քաղ. Ժողովէն տակաւին պատասխան չ'ստացայ, պատասխանը պէտք է լինի մեր հրաժարականի ընդունելութեան պատ-

րաստութիւնը, Եգիպտոսի Հայն պէտք է հաճի կատարել Իզմիրլեանի այս խնդիր, եթէ կը սիրէ զնա, որպէս հաւատամ:

Վսեմ. Պօղոս փաշա Նուպարեանի (*) հետ

(*) Վսեմ. Պօղոս փաշա Նուպար Աղեքսանդրիոյ ազգային պաշտօնական Մարմինին տանուպետն էր այն տան: Այդ մարմինը թէև Թաղական Խորհուրդ անունը կը կրէր, սակայն հանդէպ Աղեքսանդրիոյ Հայ ժողովուրդին Երեսփոխանական և Քաղաքական Ժողովներու իրաւաստութիւնն ունէր և այնպէս ալ ճանչցուած էր Պսլոսյ Ազգային Պատրիարքարանէ: Իզմիրլեան ինչպէս Եգիպտոսի իրմէ առջի ու ետքի Առաջնորդներն, կը հովուէր նաև Աղեքսանդրիոյ թեմը և 1890ին Պոլիս երթալէն քիչ յառաջ Աղեքսանդրիոյ ազգային գործերու և խնդիրներու մասին թղթակցութիւն մը ունեցած էր Վսեմ. Պօղոս փաշայի հետ: Իզմիրլեան երբ քիչ յետոյ Եգիպտոսի Առաջնորդական պաշտօնէն հրաժարական զրկեց, պահ մը կասկածուեցաւ թէ ատոր շարժառիթն է իր և Պօղոս փաշայի միջեւ փոխանակեալ յիշեալ թղթակցութիւնը: Այս մասին գաղափար մը կազմելու համար խնդրուած էր այդ թղթակցութեան պատճէնը, որու յղումը թէև յետաձգուած, սակայն առաջնորդական պաշտօնէ հրաժարականն ընդունուելէ ետքը զրկուած է Իզմիրլեանի

մեր վերջին թղթակցութեան պատճէններն ուղած էիք, և գիտեմ թէ ինչո՞ւ ուղած էիք. սակայն անոնք պատճառներ չեն մեր հրաժարականի վրայ պնդելուն. երբ հրաժարականս ընդունուի կը գոհացնեմ Ձեր փափաքն ինչպէս և Պատ. Քաղ. Ժողովոյ փափաքը. իսկ այժմ ոչ:

կողմէ և տեսնուած է որ ստոյգ է թէ ի՞նչ ի՞նչ խնդիրներու շուրջ թէև թիւրիմացութիւն տեղի ունեցած է երկուստեք, սակայն այդ թիւրիմացութիւն իսպառ փարատած է փոխանակեալ թղթակցութեան շնորհիւ և Սրբազանին հրաժարման պատճառն ուրիշ բան չէ եթէ ոչ Եգիպտոսի կլիմային ներքեւ իր առողջութեան խանգարուիլը:
Ն. Մ. Ա.

Կ. Պոլիս, 22 Յունուար 1891

Սիրելի Աղազարմ,

Հաճութեամբ կարդացի Ձեր վերջին երեք նամակներն, որոյ պատասխանելու ժամանակ չունիմ: Միայն վիճակիդ առաջնորդական ընտրելի մասին կուգամ դիտել թէ ապաքէն Եգիպտոսի Առաջնորդն պէտք է եւրոպական լեզու մը գիտնայ, սակայն նախամեծար համարելի է ա՛յն անձն, ա՛յն եկեղեցականն որ գիտէ և համոզում ունի պաշտպանել Ազգին և Հայաստանեայց Եկեղեցւոյ նիւթական ու բարոյական շահերն՝ թէ հանրական լինին և թէ մասնաւոր, պաշտպանել արիութեամբ և ամենայն խղճմտութեամբ այն բարձր բարձրամար որ անձնական շահը, ինչ տեսակ ալ լինի, ազգին և եկեղեցւոյ շահուց հանդէպ ոչինչ է, մասնաւոր այն խոր համոզմամբ որ Ազգին և Եկեղեցւոյ շահուց և իրաւանց պահպանման մէջ է ամեն կարգի հայ անհատականութեան ի մասնաւորի եկեղեցական դասակարգին շահուց ապահովութիւնն, և ի՞նչ օգուտ լեզուագիտութենէն,

երբ այս առարքինութիւններ — հարկի մէջ կը գտնուինք այսպէս անուանել պարտաւորութեան պայմաններն — կը պակսին, երբ անձնական շահն ու փառք Ազգին ու Եկեղեցւոյ նուիրական շահուց հետ կը փոխանակուին: ...

Սիրելի Աղազարմ, երբ այս տողերը կը գրեմ Ձեզ ա՛յն համոզումն ունիմ որ դուք իբրև գիտակ Եգիպտոսի ազգային գործոց և առաջնորդական պաշտօնին բնութեան յեգիպտոս, լաւ ու քաջ կ'իմաստասիրէք զայն ա՛յն պատուական հայ անհատներու հետ, որոնց թիւը խորին ցաւ զգալով կ'ըսեմ, թէ յոյժ սակաւաթիւ է այդր:

Մի երկնչիք Տ. Գէորգ վարչապետէն(*),

(*) Գեր. Տ. Գէորգ Ս. Եպս. Իւթիւճեան, այն ատեն դեռ վարչապետ և փոխանորդ Պոլսոյ Ս. Պատրիարքին և այժմ Առաջնորդ Եւրոպոյ, Իզմիրլեանէ յետոյ եղած է Եգիպտոսի Առաջնորդ 1892էն մինչեւ 1895: Իր օրոջն է որ Առաջնորդարանի դէմ մեծ դատ մը բացուած է. այս դատը վնասակար հետեւանք ունեցած չէ Առաջնորդարանի համար. առ այս մեծապէս աշխատած է Նորին Սրբազնութիւնը և շնորհս լալուճեան

կը յուսամ որ դո՛հ ընէ զՆգիպտոս , բայց
երբ ընտրուի , մի՛ թողուք միայն , գործակեցե-
ցէք նմա , ինչպէս գործակեցեցայք ինձ . գոր-
ծակեցեցէք դուք և պիտի տեսնէք արդիւնքը :

գիր ստացած է Գաւառական Ընդհանուր Ժողո-
վոյ այն ատենուան ատենապետ երջանկայիշատակ
Տիգրան փաշայէ : Ն . Մ . Ա .

Կ. Պօլիս , 25 Փետր . 1891

Սիրելի Աղաղարմ ,

Վսեմ . Տիգրան փաշայի մէկ յանձնարա-
րութեան համաձայն գրած եմ նմա ի մասին
Գեր . Իւթիւճեանի և այն խորհրդակցու-
թեամբ Վսեմ . Ստեփան փաշայի Ասլանեան(*) :

Մնայք բարեաւ , Սիրելի Աղաղարմ , ազ-
նիւ և անձնուէր երիտասարդ , չպիտի մոռնայ
զՁեզ ի գմիրլեան , կը յուսամ թէ և դուք
չէք մոռնար զայն : Ողջոյն և օրհնութիւն առ
հասարակ բոլոր պաշտօնական մարմնոց և ող-
ջամիտ ժողովրդեան եւս և բարեկամաց : . . .

(*) Ստեփան փաշա Ասլանեանի յեզիպտոս
ունեցած ազգային գործունէութեան մասին , տես-
նել « Նօթեր եզիպտոսի Հայ Գաղութին վրայ »
անուն գրքոյկը , եր . 68 : Ն . Մ . Ա .

Սիրելի Աղազարմ,

Հոգեւոյս Տ. Ներսէս Պատրիարքին օրով մեր գործակցութեամբ կատարուած ազգային ծանօթ խնդրոյն առթիւ քննութեան ներքեւ կը գտնուիմ (իբրեւ Պատրիարքական Փոխանորդ ունեցած մասնակցութեանցս համար ծանր խնդիր), այս պատճառաւ Ձեր նամակներուն պատասխանելու ժամանակ չունիմ առայժմ:

Սիրելի Աղազարմ

Մեկնութեան կարօտ չէ թէ ինչո՞ւ չուտով չպատասխանեցի Ձեր նամակներուն. երբ նկատի առնուի որ կարգ մը մասնիչներու ձեռքով գտնուեցայ և կը գտնուիմ ցարդ հանդէպ կառավարութեան ուստիկանական տեսչին և դատական գործոյ նախարարին, երբ է նկատ առնուի որ Պատրիարքը կը ծանուցանէ ինձ պաշտօնապէս թէ « կառավարութիւնը կը հրամայէ որպէսչի մեկնիք Կ. Պոլսէն », առ որ պատասխանեցի թէ « Երկու կերպով միայն կը հեռանամ Կ. Պոլսէն, ս) երբ հրապարակային դատաստանաւ մը համաձայն օրինաց և արդարութեան կը վճռուի, և ք) երբ Տէրութիւնը ըստ որում զօրութեան տէր, բռնի կը հեռացնէ զիս աստի. այս երկու պարանէն դուրս ուրիշ եղանակաւ կամ ինքնակամ չեմ մեկնիր ըստ է Կ. Պոլսոյ » : Կսպառեմք Բ. Դրան պատասխանին : Փակեմք այս անօրէնութեան մարդոց յարուցած խըն-

**



գիրը, հաւատացիր, սիրելի Աղազարմ, որ ի սիրաւ և ի հոգի ուրախ եմ . . . :

Ձեր Զատեակեան շնորհաւորութեան տողերն սիրովանք և մխիթարութիւն եղան ինձ, այդ պարտականութիւն ինձ բաժին էր կատարել նախապէս, ողջունել զՁեզ, օրհնել զՁեզ և Ձեր համեստափայլ Տիկինն և աւետել ի խորոց սրտէ Գրիստոս յարեաւ ի մեռելոց: Սակայն պատուական երկտասարդ, Եգիպտոսի կլիման այստեղ եւս կը սարսէ զիմ առողջութիւն, Աղեքսանդրիոյ մէջ կրած Տիգրանդերիի հիւանդութիւնն յանկարծ երեւան ելաւ, և զիս ձգեց յանկողին, եթէ չլինէր Նորին Վսեմութիւն Ստեփան փաշա Աւլանեան երկար պիտի մնայի անկողնոյ մէջ և Ս. Զատիկի Սրբանուէր օրերն հոգեւոր մխիթարութենէ զուրկ պիտի գտնուէի, փառք երկնից անցուցի շուտով և արդ ապաքինած եմ: Նորին Վսեմութեան խորհրդով մէկ երկու օրէն կը մեկնիմ յԱլեմտաղի յօգւափոխութիւն:

Կ. Պոլիս, 19 Ներեմ. 1891

Սիրելի Աղազարմ,

Միեւնոյն իրաց նկատմամբ ամեն պահանջ գոհացնելու ընթացք կամ ուղղութիւն հարկ իսկ չկայ ըսելու թէ բացարձակապէս վնասակար է, գործն թէ լինի մասնաւոր եւ թէ հանրական:

Ձեր տեսութիւնը, զոր պարզած էիք և զոր իբրեւ առաջարկ Նորին Գերապատուութեան նորընտիր Առաջնորդին ներկայացնել մտադիր էք, փորձառութեան և Եգիպտոսի ազգային գործոց օգտին վրայ հիմնեալ է. կատարելապէս համամիտ եմ Ձեզ, երանի թէ հակակերպէր Ձեզ Գեր. Առաջնորդն: Մի հեռանաք Ձեր ուղղութենէն, փութով կատարեցէք Ձեր խղճի պարտականութիւնը:

Ձեր ուզած պաշտօնական գրութեանց մեր կողմէ վաւերացեալ պատճէնները (*) ներ-

(*) Ասանք այն պատճէններն են, որոնց մասին խօսուած է 7րդ երեսի ծանօթութեան մէջ:
Ն. Մ. Ա.

փակ կը գտնէք: Նոյնպէս Եգիպտոսի վիճակին համար մեր պատրաստած սահմանադրական հրահանգի (*) եօթն յօդուածներէ բաղկացեալ հիմնական տրամադրութեանց օրինակը ներփակ կ'ստանայք. այս տրամադրութիւնները գաղղիներէնի թարգմանել տալով յանձնած եմ արդէն Վօեմ. Տիգրան փաշայի՝

(*) Եգիպտոսի քաղաքական բացառիկ գիրքին և Հայ բնակչութեան սակաւութեան և տեղական կարգ մը պայմաններու առջեւ՝ Իզմիրլեան Սրբազանի առաջնորդութեանօրով կարելի եղած չէ Ազգային Սահմանադրութեան կէտ առ կէտ գործադրութիւնը Փարաւոններու երկրին մէջ: Իրաց այս կացութիւնը ստեղծած էր Եգիպտոսի համար յատուկ Սահմանադրական Հրահանգի մը անհրաժեշտ պէտքը: Իզմիրլեան՝ առանց դպչելու Սահմանադրութեան հիմնական սկզբունքներուն, — համարատուութիւն և համարառութիւն և ժողովուրդին քուէով Երեսփոխանական ժողովի ընտրութիւն — պատրաստած էր այդ տեսակ հրահանգ մը, որ տեղական պահանջումներուն յարմարցուած էր և մատուցած Փաւառական Ընդհանուր ժողովին և Պօլսոյ Պատրիարքարանին:

Ն. Մ. Ա.

իբրեւ Ատենապետի Ազգ. Գաւառական Ընդհանուր ժողովոյ վիճակիդ, որու մէկ հայերէն օրինակն ալ յանձնած եմ Ազգ. կեդր. վարչութեան, որպէս յիշուած է մեր վերջին ընդարձակ պատասխանագրին մէջ:

Սիրելի Աղազարմ, դուք ըստ ամենայնի արժանաւոր էք ո՛չ միայն Գեր. Առաջնորդին յանձնարարուելու, այլ աւելի բարձր իշխանութեանց յանձնարարուելու, իզմիրլեան միշտ պատրաստ է իւր սահմանին մէջ պէտք եղածն ընելու Ձեր բարօրութեան և երջանկութեան համար:

Սիրելի Աղազարմ,

Եգիպտոսի վիճակին համար մեր ծրագրած յատուկ Սահմանադրական Հրահանգին և անոր յարակից պաշտօնական թղթոց մեր կողմէ վաերացեալ պատճէնները կ'ուղէք: Ձեր յիշատակեալ նամակները չ'ստացած արդէն թղթատարին յանձնած էինք Ձեր խնդրածները, միայն թէ փոխանակ հրահանգի ամբողջ ծրագրին անոր հիմնական տրամադրութեանց պատճէնն յղեցի, զի նոյնը մատուցած եմ Ազգային Կեդրոնական Վարչութեան և Վսեմ. Տիգրան փաշային:

Այս անգամ ըստ Ձեր խնդրանաց ներփակ կ'ստանայք նոյն ամբողջ հրահանգին բընագիրը, կը խնդրեմ մասնաւորապէս որ շուտով օրինակէք զնոյն և անվնաս վերադարձնէք ինձ. այս այսպէս լինելով քաջապէս վստահ եմ:

Վսեմ. Տիգրան փաշա ի Գահիրէ եւ Վսեմ. Պօղոս փաշա յԱղեքսանդրիա պէտք է

մնան ազգային գործոյ գլուխն, այս է բացարձակապէս օգտակարն ազգային ամեն տեսակ գործոց այդք յ'եգիպտոս: Ասի գործադրելի է անվրէպ, երբ չեն պակսիր հզօր կամք և հաստատամտութիւն և կատարեալ գիտակցութիւն Եգիպտոսի հայ գաղթականութեան կազմութեան և Եգիպտոսի վիճակին բացառիկ կացութեան:

Սիրելի Աղաղարմ,

Նորին Վսեմութեան Տիգրան փաշայի գործէ քաշուելը շատ ու շատ ցաւայի է եգիպտոսի համար, մասնաւորապէս Գահիրէի համար: Աստուած շնորհք և զգաստութիւն տայ անոնց որ իրաց այս վիճակին տեղի տուին:

Գիտակ եմ քաջ որ ուրախ կը լինիք երբ յայտնեմ թէ առողջ և հանգիստ կ'ապրիմ:

Սիրելի Աղաղարմ,

Ձեմ ընդունիր երբէք որ դուք սիրելի Աղաղարմ, յանցաւոր լինիք Ձեր նամակներ ուշացնելնուդ համար, կ'ըմբռնեմ քաջ հալածեայի մը, վշտահար սրտի մը վիճակն զի ես իսկ ի հալածանս կամ: Ձեր այդ վիճակին մէջ չ'սպասեր իզմիրլեան որ փոյթ ունենաք շարունակելու Ձեր նամակագրութիւնն, մանաւանդ իզմիրլեան իւր անձը պարտաւոր կը խոստովանի որ չ'փութաց միտիթարել Ձեր վըշտահար սիրտն Ձեր պատուական հօր մահուան առթիւ, ոյր համար հազիւ թէ ներողութեան հանդիպի: Լուսաւորեցէ Տէր զհոգի բարեպաշտ հօր Ձերոյ, և տացէ Ձեզ կեանս երկարս, երջանիկս և բարելիցս ամէն:

Իմ առ Ձեզ ուղղած բոլոր գրութիւններն, որք Ձեր ի խորհնեան ազգային վարժարանի ունեցած պաշտօնին կը վերաբերին, ազատ էք հանել յերեւան, զի այն գրութիւններ խոր

համոզմանս վրայ հաստատուած են և զի խղ-
ճիս ձայնն են նոքա (*):

(*) Քաղաւած Իզմիրլեանի 29 Օգոստոս 1880
թուական նամակէն:

« Տարակոյս չ'ունէի արդէն թէ Ձեր անօրէ-
նութեան ներքեւ վարժարանն օգտակար լինելու
վիճակին մէջն է, և ազգային երկսեռ մանկախն
կը յառաջդիմէ և ս'ր սղջավիտ անձ կրնայ ուրու-
նալ Ձեր տարապայման աշխատութիւնն ու վաս-
տակ յօրէնեան երկսեռ վարժարանին համար:
Եթէ ուսանողաց և ուսանողուհեաց ֆիզիքական
ու բարոյական կեանքն ու ընթացք համապատաս-
խանէին ձեր ջանից, եթէ Ուսումնական Սօրհրդոյ
պարբերական հրատարականները տեղի չունենա-
լին, եթէ վերջապէս Եզիպոսոս չլինէր Ձեր աշխա-
տութեան կեդրոն անվիճելի է թէ այսօր մէկ եր-
կու ձեռք չըջանաւարտ աշակերտներ պիտի ու-
նենայիք, այսու հանդերձ ձեր ջանքերն արդիւ-
նաւոր եղան և պիտի լինին, ինչպէս կ'ապացու-
ցանեն անցեալ և այս տարուան քննութեանց
արդիւնքներն . . . Կարողութիւն և զօրութիւն կը
մաղթեմ, ապրիք, հազար ապրիք:

Սիրելի Աղազարմ, Օգոստոս 15|21 թուական
նամակդ քանիցս կարդացի ուշադրութեամբ,
անձնական գործոցդ մասին գրածներդ շատ ճշմա-
րիտ են, իրաւունք կուտամ Ձեզ, ապաքէն հոգ-

կաթողիկոսական ընտրելիութեան ան-
թիւ ստացած եմ վիճակիդ վարչութեան նա-
մակն, պատասխանն ընտրութեան գործն ա-
ւարտելէ յետոյ: Այսպէս ոչչած եմ՝ բոլոր
ստացած նամակներուս և հեռագրերուս հա-
մար:

Նած էք, պէտք ունիք կազմութեան: Վարժա-
րանը յոյժ կը նեղէ զՁեզ, ոչ անոր համար սակայն
որ կ'աշխատիք, ինչպէս կը հաւատամ, այլ անոր
համար որ անտեղի և անխրաւ դժուարութեանց ու
խնդրոց կը պատահիք:

Սիրելի Աղազարմ, հաստատուն համոզում եւ
բարձր բարոյական ունիք, մի՛ վհատիք: Սակա-
ւիկ մի եւս համբերեցէք: . . . Կարողութիւն եւ
զօրութիւն կը մաղթեմ Ձեզ համար ընդ միշտ,
որպէս և երջանիկ ու փառաւոր պապացայ:

Սիրելի Աղազարմ,

Ձեր վերջին նամակին պարունակութիւնն եզրպտոսի Հայ գաղթականութեան կեանքի խնդիրն է, շատ ցաւ ղգացի այն դատին (*) համար որ բացուած է ընդդէմ Առաջնորդա-

(*) Այս դատը 1892ին Եղիազարեան Ժառանգորդներու կողմէ Առաջնորդարանի դէմ բացուած էր 1732) Եգ. սսկոյ նախնական գումարի մը համար: Եթէ Առաջնորդարանն այս դատը կորսնցնէր, իրմէ կախեալ բոլոր հաստատութիւններու հետ նիւթապէս և բարոյապէս կը քայքայուէր գրեթէ:

Գահիրէի նախնական Խառն Դատարանն եւ ետքէն Աղեքսանդրիոյ վերաքննիչ Խառն Ատեանն իրենց վճիռներով մերժեցին Եղիազարեաններու այս դատը, որու մանրամասնութեան տեղեկանալու հետաքրքիրք կրնան դիմել փաստարան Պ. Հանրի Լամպայի Առաջնորդարանի անունով Գահիրէի Խառն դատարանի 1893 Սեպտ. 21 նիստին մատուցած տպագրեալ ստուար Conclusionsին:

Ն. Մ. Ա.

րանի վիճակիդ, տարակոյս չունիմ սակայն որ Ազգը չպիտի կորսնցնէ իւր արդար իրաւունքը շնորհիւ Գեր. Առաջնորդ սիրելի եղբօր ջանից և աշխատութեան և ազգին աւագ արանց պաշտպանութեան:

Ձեր ակնարկած հաւաքածոյն, գիտեմ, թղթերուս մէջ որոնեցի զայն, չկրցի գտնել, սակայն ընդ որում խնդիրն կարեւոր մանաւանդ ազգային իրաւանց վերաբերեալ խնդիր, իմ այդք ի պաշտօնի եղած ատեն օրինակածը (բուն արձանագրութեան տուտարէն օրինակածը) կը զրկեմ առ Ձեզ, որ հինգ փոքրիկ տետրիկներու մէջ ամփոփեալ է. կը յուսամ թէ օգտակար կը լինի:

Աւելորդ է ըսել թէ այն տետրակներ Ձեզ կը զրկեմ այն վստահութեամբ թէ ինձ պիտի վերագարձնէք գոնէ մինչեւ տարւոյս Մայիս ամսոյ վերջն:

Թէ ո՞րչափ անհամբերութեամբ կ'սպասեմ բացուած դատին ելից մասին տեղեկութիւն ունենալ՝ այն յայտնի կը լինի Ձեզ՝ երբ այդ անհամբերն եզրպտոսի մէջ պաշտօն վարող մ'է, սրտնաչուք պաշտօն վարող մը:

Սիրելի Աղազարմ,

Կը ցաւիմ որ չկրցի ժամանակին պատասխանել Ձեր նամակներուն, սակայն այնպիսի պատճառներ արգելք դարձան, զոր չէ կարելի առնուլ ի գիր:

Ամանորի և տօնական աւուրյ առթիւ Ձեր շնորհաւորութեանց մասին կը յայտնեմ շնորհակալութիւններս, և կը մաղթեմ որ օրհնէ երկինք Ձեր կեանք, Ձեր համեստափայլ Տիկնոջ կեանք, Ձեր տուն և Ձեր գերդաստան ամենայն բարօրութեամբ ի երկար տարիներով:

Վիճակիդ Գաւառական Ժողովոյ ընտրութեան — օրինաց տիրելուն — համար յանչափս ուրախ եմ: Գալստեան կտակի և Գալստեան թողօնէն (քերէ/էէն) մեծագումար պահանջի դատերուն մէջ Ազգին ձեռք բերած յաջողութեան համար շատ և շատ ուրախ եմ. թէպէտեւ կտակի խնդիրն արդէն փակեալ (*):

(*) Իզմիրլեան իր սովորական համեստութեամբ չըսեր թէ իր հետատեսութեան ու իմաստ

էր՝ քանի որ թէ ազգին և թէ մանաւանդ կառավարութեան կողմանէ վաւերացեալ էր. իսկ եղիւզարեանցի պահանջն առաջին անգամն էր որ տեղի կունենար, և ժամանակի անցումն իրեն հետն էր: Վերաքննութենէն բնաւ երկիւզ չկայ, ամենայն հանդարտութեամբ հանդիսատես եղիք:

Տարակոյս չունիմ իմ տետրակներն այլեւս առանց յապաղելու կը վերադարձնէք առ իս, ըստ որում խնդիրն աւարտեալ է:

Աղազարմ

տութեան ու ջանքերուն շնորհիւն էր որ Գալստեան կտակի բազմամեայ ու կնճաւից խնդիրն իր առաջնորդութեան օրով փակուեցաւ ի նպաստ Գալստեանէ կառուցեալ Ազգային Վարժարանին:

Աւելի մանրամասնութեան համար տեսնել Նօթեր եզրիպոսի Հայ Իւղութիւն վրայ տնուն գրքին 112—114 երեսները: Ն. Մ. Ա.

Սիրելի Աղազարմ,

Ստացայ Ձեր Մարտ 29/10 Ապրիլ թը-
լակնաւ նամակն և ի նմին ծրարեալ հինգ
տետրակները :

Դուք, սիրելի Աղազարմ, որ այդ փա-
րաւոնական աշխարհի Հայոց Առաջնորդարանի
ժանր և փափուկ աշխատութեամբ զբաղեալ
և ը՛տանեկան հոգերով ու ցաւերով պաշար-
եալ կը վարէք Ձեր կեանք, մի՛ բնաւ անցնէք
Ձեր մտքէն թէ Իզմիրլեան կը մեղադրէ զՁեզ
գիտէ և համոզուած է Իզմիրլեան որ անկեղծ
սիրտ մը կը կրէք դուք, գիտէ որ հաւա-
տարիմ էք դուք Ձեր պաշտօնին, Ձեր եկե-
ղեցւոյն, Ձեր Ազգին, և այս շատ է, որով
և մխիթարեալ է Իզմիրլեան, և աղօթարար
ընդ միշտ որ օրհնէ զՁեզ և Ձեր ընտանիք
Աստուած բարերար :

Անպատում ուրախութեամբ ընթերցայ
Ձեր նա՛նակին ա՛յն տողեր, որով կը հաղոր-
դէիք վիճակիդ Առաջնորդարանի դէմ բաց-
ուած դատին վերջանալը :

Հարուածը Թաթուլինն էր որու առջեւ
պէտք էր խոնարհիլ ի մահ : Բըքէք սիվիլի(*)
մէջ ալ, եթէ յաւակնին իսկ այն միջոցին ևս
գիմեւ, չպիտի կրնան յաջողիլ, ապահով ե-
ղիք : Այլ ևս թող ուրախ լինին եգիպտա-
բնակ Հայեր, և իրենց բոլոր աշխատութիւնն
ազգային ներքին գործոց — վարչական, տըն-
տեսական, կրթական, ժառանգական եւայլն
գործոց — բարւոք տնօրինութեան նուիրեն :

(*) Եգիպտոսի Խառն Գատարաններն, որոնք
կը վճռեն տարբեր ազգութեանց պատկանող ան-
հատներու քաղաքային դատերը, երկու աստիճան
ունին. Նախնական (Première Instance), Գահի-
լէ, Աղեքսանդրիա և Մանսուրա, և Վերաքննիչ
Ասեան (Cours d'Appel), միայն յԱղեքսանդրիա :

Երբ վերաքննիչ Ատենի վճռոյ մը դէմ՝ օ-
րէնքով նախատեսեալ պարագաներու վրայ հիմ-
նուած բողոք կը մատուցուի, նոյն Ատենանը դարձ-
եալ կը քննէ խնդիրը և կ'արձակէ նոր վճիռ մը,
որ վերջնական է : Այս է ահա Բըքէք սիվիլ ըս-
ուածը : Ե. Մ. Ա.

Սիրելի Պ. Ն. Աղազարմ

Գալով Առաջնորդական խնդրոյն, վիճակիդ Պատ. Գաւառական Ժողովն յանձին իմ կատարեց ընտրութիւնն(*), և կեդրոնը կատարուած ընտրութիւնն օրինաւոր գտած լինիլն ծանուցանելով՝ ընդունելութեան մասին հաճութիւնս ուզեց, և ես յայտնեցի իմ հաճութիւնն արժանաւոր պատասխանով մը ինձ ուղղուած պաշտօնագրոյն, և սակայն ցարդ անլոյժ կը մնայ խնդիրն, որ միայն Պատ. Գաւառական Ժողովոյն զբաղման առարկայ կրնայ ըլլալ և ոչ իմ: Պատ. Գաւառական Ժողովն

(*) Իզմիրլեանն իր աքսորաւայրէն ազատելու դիտումով գլխաւորաբար՝ Գաւառական Ընդհանուր Ժողովը 1898 Մարտ 23/4 Ապրիլինիստին մէջ զանի նորէն միաձայնութեամբ Առաջնորդ ընտրեց Եգիպտոսի սակայն Պսլոյ Պատրիարքարանը ժամանակ մը յետոյ յայտարարեց թէ ինք հակառակ իր ջանքերուն չէ կրցած առ այդ կայտերական հրովարտակն ստանալ Օսմ. կառավարութենէն. հետեւաբար այս ընտրութիւնը անհետեւանք մնաց դժբաղդաբար: Ն. Մ. Ա.

պիտի գիտնայ անշուշտ պահել իր արժանապատուութիւնն:

Արդ միանգամ ընդ միշտ կը յայտարարեմ թէ որ և իցէ խնդրոյ մասին, լինի՛ առաջնորդականն լինի՛ այլ ազգային խնդիր, ո՛չ ոք, ո՛չ այդ աշխարհի մէջ և ո՛չ այլուր, *ursolunopխն* եւ իշխանութիւնն չունի իմ անունով խօսելու և գործելու: Կը յաւելում յայտնել թէ գործելու ա՛յն ամէն միջոցներ, ինչ նպատակաւ ալ լինին, որոնք ազգին եկեղեցւոյ շահուց հակառակ են եւ փնտասակար, կը մերժեմ բացարձակապէս, կը մերժեմ խապառ: Նոյնպէս կը մերժեմ մինչեւ իսկ արդար համարուած միջոցներն ազգային եկեղեցական պաշտօնէի ընտրական խնդրոյ մէջ, այն խոր համոզմամբ որ այս կամ այն պաշտօնին ընտրուելու համար թեկնածու լինելն, եւ, թո՛ղ անարդար և անպատուաբեր միջոցներն, արդար համարուած միջոցներն իսկ ի գործ դնելն անարժան և եկեղեցականի արժանապատուութեան վիրաւորիչ է, մանաւանդ փնտասակար ազգին:

Եկեղեցական մը երբ պաշտօնի կը կոչուի պէտք չէ ուրախանայ իբրեւ տղայ, եւ երբ չկոչուի պէտք չէ ցաւի իբրեւ չտես:

Ս. Երուսաղէմ, 15/27 Մարտ 1899

Ազնիւ Պարոն Աղազարմ,

Ստացայ Ձեր Ազնուութեան 21/4 Մարտ
Թուականաւ նամակն ։

Համոզումներս առանց իրական և շօշա-
փելի փաստերու չեմ փոխեր, թէ եւ երբեմն
անսպասելի պարագաներու նկատմամբ խիստ
կը խօսիմ կամ կը գրեմ. եւ այն սակայն ան-
կեղծութեան և ուղղամտութեան հետեւանք է ։
Ուստի աներկմիտ եղիք Ձեր մասին նոյն գա-
ղափարները կը տածեմ ինչ որ Ձեզ ճանչնալէ
յետոյ ունեցայ ։

Ձեր տուած տեղեկութիւններն, ի մասին
ինձ լինելիք նուէրին, կարգալէ յետոյ՝ կու-
գամ յայտնելու թէ՛ կ'ընդունիմ շնորհակա-
լութեամբ ա՛յն նուէրն որ Ձեր նախածեռնու-
թեամբ և բարեկամաց մասնակցութեամբ պի-
տի գոյանայ ։ Նուէրին արժէքն կամ քանա-
կութիւնը չէ որ սիրելի է ինձ և յարգելի
այլ պատուարժան բարեկամաց անկեղծ սի-

րոյն և զգայմանց մէկ հաւատարմքը պատկե-
րելուն համար մեծարժէք է ա՛յն նուէր ։

Շնորհակալեացս հետ կը նուիրեմ ողջոյն
և սէր տիրանուէր բոլոր ազնիւ բարեկամաց,
Ձեզ, Ձեր համեստափայլ Տիկնոջ և Ձեր սի-
րատուն Յակոբիկին ։

Ա. Երուսաղէմ, 6/18 Ապրիլ 1899

Աղնիւ Պարոն և Աղազարմ

Խորին շնորհակալութիւնն ա՛յն համակրանաց համար զոր Ձեր նախաձեռնութեամբ ցուցուցին ինձ աքսորականիս Ձեր նշանակած ազգայինը: Համակրութիւն, որ շատ արժէքաւոր է և բարձր եւ որ իսկապէս մխիթարական եղաւ առաւել քան նիւթականն,

Հաճեցէք հաղորդել նոյն Աղնիւ անձնաւորութեանց եւ յայտնել իմ շնորհակալութիւնն, եւ սիրալիր ողջոյնն ի Տէր Յիսուս Քրիստոս:

Այն լուրը թէ Անդղիոյ թագուհին իր պալատան Պատուակալ Տաներէց անուանած է զիս, կամ նոյն տխուր տուած է ինձ, առասպելաց առասպել մ'է, որ թերեւս վրնասակար հետեւանաց յանգի արդէն տառապակիր աքսորականիս համար:

Ա. Երուսաղէմ, 29/10 Մայիս 1899

Սիրելի Պարոն Աղազարմ

Մեծ գոհունակութեամբ կարդացի Ձեր Մայիս 14/26 թուականաւ նամակին ա՛յն տողերն որով կը ծանուցանէիք Գիմն էլ Արուսի (*) ազգային ազարակի խնդրոյն վերջնապէս կարգադրուած ըլլալն: Նոյնպէս շնորհակալութեամբ կարդացի որ անձամբ յանձնած էք Գրիգոր էֆ. Եղիայեանի (**) մեր առ նա ուղղած նամակն:

(*) Գիմն էլ Արուսի ազարակն 1889ին գնուած է Առաջնորդարանի համար: Պատճառաւ մը այդ գնումն արձանագրուած էր Առաջնորդ Իզմիրլեան Եպիսկոպոսի և Ընդհանուր ժողովոյ Ատենապետ Տիգրան Փաշայի անուշով: Երբ այդ պատճառը վերցաւ՝ ազարակն ալ Ազգին անուան դարձաւ 1899ին, կամ « ազարակին խնդիրը վերջնապէս կարգադրուեցաւ »:

(**) Հայ երիտասարդ մը Փահիրէի Պատժական Նախնական Դատարանէն մահուան դատապարտուած էր մարդասպանութեան համար: Իզմիրլեան Սրբազան խնդրած էր Եղիայեան էֆէ որ

Չեր յիշած ապահովագրեալ նամակն ստացայ առաջնոյն պատասխանելէս վերջը, անոր համար հարկ չհամարեցի վերստին գրել: Ստացած եմ նաեւ նոյն ագարակի խնդրոյն վերաբերմամբ Առաջնորդարանիդ 15/27 Մայիս թուականաւ եւ 656 թուահամարաւ պաշտօնագիրն, որ պատասխանն էր մեր 8/20 Մայիս թուականաւ յայտագրին:

խնդիրին միջամտէ և ջանայ դժբաղդ երիտասարդը մահուընէ ազատելու: Եղիտյեան էֆ. կ'ընդունի Սրբազանին խնդիրը և շնորհիւ իր անվիճելի օրէնսգիտութեան և տաղանդին՝ վերաքննիչ Ատեանն կը թեթեւցնէ դատապարտեալին պատիժը: Սրբազանին առ Եղիտյեան էֆ. ուղղած նամակն շնորհակալութեան գիր մըն էր, որով մեծապէս կը գնահատէ անոր մատուցած այս կարեւոր ծառայութիւնը:

Եղիտյեան էֆ. այս տարուան Յունիս 21ին վախճանեցաւ ի թրիէստէ և մարմինը Գահիրէ փոխադրուելով մեծ հանդէսով ամփոփուեցաւ ազգային Գերեզմանատան ընտանեկան դամբարանին մէջ: Գրիգոր էֆ. Հայ աղքատ տղոց բարձրագոյն կրթութեան ի նպատտ թողուց իշխանավայել կտակ մը, որով անմահացուց իր անունն ու յիշատակը:

Ն. Մ. Ա.

Ս. Երուսաղէմ, 20 Փետր. 1901

Ազնիւ Պ. Ն. Աղազարմ

Քանի մ'որ առաջ ստացայ Չեր Փետր. 11 թուականաւ նամակն ինչպէս եւ ներփակը:

Չեր նամակը կը յիշեցնէր այն օրերն, ուր ոգի ի բռին կ'աշխատէինք Գահիրէի ազգային վարչական տնտեսական և կրթական գործերը բարւոքել ու բարեքել, եւ ուր ուրեմն համերաշխութեամբ վարչական մարմնոց և ժողովրդեան յաջողեցանք բաւական գործեր կարգի դնել, որոնց կարգին լուծուեցաւ հոգեւոյս ազա կարապետ Գալստեանի խընդիրը: Օրհնեալ յաւէտ անոր յիշատակը: Սակայն, սիրելի Աղազարմ, իբրեւ Առաջնորդ և պաշտօնեայ Հայաստանեայց ազգին և եկեղեցիին, որ ի Գահիրէ Եգիպտոսի, պարտքս կատարեցի, որու հանդէպ մխիթարական է որ երբեմն երբեմն կը յիշեն 1886—1890ի շրջանի առաջնորդական պաշտօնավարութիւնն զոր վարեցի ո՛չ նուազ դժուարին պարագաներու մէջ, որոնց գիտակ էք:

Տարակոյս չկայ որ կը փափաքէի ունենալ

հոգեւոյս Ազա կարապետ Գալուտեանի Եգիպտոսի անմուռաց բարերարին կենսագրութիւնը (*), բայց տեսնելով Չեր աշխատութեանց չափազանցութիւնը կը վարանիմ խնդրել զայն։ Այդ կենսագրութիւնը պիտի արձանագրէք անշուշտ Առաջնորդարանի, Եգիպտոսի ազգային բարերարաց յատկացեալ, պատմական անցից տոմարին մէջ, իբր այն երկու կէտ Չեր ուշագրութեան կը ներկայացնեմ։

1. — Նուպար փաշայի, իմ ներկայութեան առ Թագւոր փաշա բրած ստիպողական յանձնարարութեան, չ'ըսեմ հրամանին, վրայ Թագւոր փաշա պարտաւորեցաւ կտակի խնդրոյն լուծման աշխատիլ։

Այն օրն որ տեղի ունեցաւ այս, մանրամասն պարզելի Նուպար փաշային Գալստեան ժառանգութեան և կտակի խնդիրները, շատ զգածուեցաւ մարդը եւ անմիջապէս կո-

(*) Այս կենսագրութիւնն այն է որ մեր կողմանէ հրատարակուած էր Նո՛ւ Օրի 1900 Սեպտեմբերի թիւերուն մէջ, Իզմիրեան Սրբազանի փափաքանաց վրայ մէկ ձեռագիր օրինակը զըրկուած է իրեն ետքէն։ Ն. Մ. Ա.

չել տուաւ Թագւոր փաշան, չ'թողուց որ մեկնէի եւ իմ ներկայութեան նոյն յանձնարարութիւնն ըրաւ Թագւոր փաշային, և Թագւոր փաշա պարտաւորեցաւ գործել։

2. — Կտակին հաստատման և կտակեալ կալուածոց կառավարական դիւաններու մէջ եղած արձանագրութեանց կառավարական կնքով վաւերացեալ պատճէնները Պութրոս փաշայի (*) մասնաւոր աշակցութեամբ կրցի ստանալ։ այդ վաւերացեալ պատճէններով, որոնք պարզապէս սեփականագրեր են ազգին ձեռքը, հոգեւոյս կտակարարին ժառանգորդներուն Առաջնորդարանի դէմ բացած մեծագու՛մար պահանջի դատը շահեցաւ ազգը։ առանց անոնց բաւական դժուարութիւններու պիտի հանդիպէր խնդիրը, ինչպէս գրած էիք ինձ այն ատեն։

(*) Պութրոս փաշա Ղալի խպտի էր ազգով. եղաւ Նախարարապետ Եգիպտոսի եւ իր պաշտօնին վրայ էր, երբ աւա՛ղ, սպաննուեցաւ 1910 Փետր. 20ին գնտակահար սպաննուեցաւ էլ-Վարտանի անունով ազգայնամոլ դեղագործէ մը։ Պութրոս փաշա մէկէ աւելի պարագաներու մէջ օգտակար եղած է Եգիպտոսի Հայ գաղութին։ Ն. Մ. Ա.

Սիրելի Աղաղարմ , փափաքելի էր ինձ
չատ որ կատարէի Ձեր խնդիրը լուսանկարս
դրկելով Ձեզ , բայց հինգերորդ տարին է որ
աքսորական վիճակի մէջ կը գտնուիմ , քովս
չունիմ լուսանկարներէս , այս տեղ ալ քաշել
տուած չեմ , և այս ուխտաւորաց ձեռքը
չանցնի եւ վնասուց չը հանդիպին , արհեստա-
գործներ իրենց շահը գիտեն , ժողովուրդին
վնասն կամ օգուտը չեն մտածեր . եթէ շատ
պէտք ունիք Մեղպուրեան էֆէնտիի միջոցաւ
Պօլսէն կրնաք բերել տալ :

Յ . Գ .

Պատմական անցից տումար մը հաստատե-
ցէք , ուր գրուած պէտք է ըլլան՝

1. Առաջնորդաց եւ տեղապահաց յա-
ջորդութիւնը և անոնց կեանքն ու արարքը :
2. Բարերարաց կենսագրութիւնը :
3. Գաղթական Հայոց տնտեսական ,
կրթական , ընտանեկան կացութիւնը եւլն :

Ազնիւ Պարոն

Ստացայ Ձեր Յունուար 10 թուականաւ
չնորհաւորականն և զեղուն օրտոյ ու հոգիով
կարգացի Ձեր բարեմաղթական տողերն , ո՛չ
անոր համար որ Սիօնի աքսորականը այս կամ
այն յատկութեամբ կը փայլի , այլ անոր հա-
մար որ կը յիշեն անի իր աքսորական դառն
կացութեան մէջ , որ ո՛չ նուազ մխիթարական
բնութիւն կրնայ ունենալ տարագրեալի մը ,
տարապարտ տարագրեալի մը համար . Փա-
րաւոնական աշխարհի սահմաններու մէջ բնա-
կողներէն մին էք և դուք որ կը յիշէք Երու-
սաղէմի աքսորականը : Կը տանի նա և պիտի
տանի աքսորականի տառապակիր կեանքը ,
վիշտերն ու ցաւերը սիրով , համբերութեամբ
ու արիութեամբ մինչեւ գերեզման սրտազինս
մաղթելով միշտ իր բազմաչարչար ազգին՝
Հայոց ազգին համար անգորրութիւն , կեանք ,
յոյս ու լոյս և յառաջդիմութիւն :

Ազնիւ Պարոն,

Հիմա Գահիրէ գտնուող Ս. 2. Սամաթիացի ստորագրութեամբ անամսաթիւ նամակ մ'ստացայ: Այս անձն իր անտանելի թշուառութիւնն և կուրծքի հիւանդութեամբ տառապիլն և անօգնական մնացած ըլլալն յայտնելով՝ թախանձադին կը խնդրէր որ ազատեմ զինքն իր ներկայ դառն ու յուսահատ կացութենէն:

Աւելորդ է ըսել, առանց մանրամասնելու, թէ ի վիճակի չեմ ո՛չ նիւթապէս և ոչ գործնականապէս օգնութիւն մը հասցնելու յիշեալ ազգայինին, ուստի, Ազնիւ Պարոն, հաճեցէք հաղորդել զայնս նոյն անձին:

Աներկմիտ եմ որ կարելիութեան սահմանին մէջ հարկ եղածը կը գործադրուինոյն այն թշուառ ազգայինն իր տառապալից վիճակէն ազատելու համար:

Իրաւունք կուտաք անշուշտ գիտելութե շատ քիչ կը յիշէք Երուսաղէմի աքսորականը, և իբր այն հաղիւ տարին մէկ կամ առ առաւելն երկու անգամ կը գրէք:

Գրեցէք, սիրելի Ազազարմ, այդ աքսորականին որ շատ սիրեց զՁեզ:

... Ազազարմ

Այսօր ստացայ Ձեր Օգոստոս 9 թուականաւ նամակն և երկու չեքերն (մին 6 եւ միւսն 30 անգղիական ոսկւոյ) և գանձեցի 36 անգղիական ոսկին:

Հիմա որ Եգիպտոսի մէջ տիրող պարբեր-

Օսմանեան կայսերական կառավարութիւնը Իզմիրլեանի, իբրեւ նախկին Պատրիարքի, 1800 ընթացիկ դահեկանի ամսական գումար մը յաւկացուցած էր:

Աքսորական Եպիսկոպոսը այս գումարով պիտի հայթայթէր ամէն պէտքերը և խնասէր հօրէ ու մօրէ որք երկու դեռատի աղջիկ քեռորդիները և անոնց զանազան պէտքերը յանձանձէր: Թէեւ շատ դժուարութեամբ բայց պարբերաբար կը գանձուէր նոյն գումարը մինչեւ 1901 Նոյեմբեր: Անկէ ետքն ամիսներէ ի վեր չէր վճարուեր, առարկուելով թէ Իզմիրլեան պէտք է մեղայագիր մը գրէ կայսերական պալատ և Պատրիարքական Աթոռին վրայ կառավարութեան գէմ գործած յանցանքներուն համար ներում խնդրէ. ու անկէ ետքը, ոչ միայն ամսականներն անխափան կը

րական ժանտախտին միացեր է և հետախտը բուռն թափով կը խնդրեմ' և կը յանձնարարեմ' միանգամայն որ ինձ համար սկսուած հանգանակութիւնը անմիջապէս դադրեցնէք, վասն զի ասանկ պարագայի մէջ ամէն կարգի անձնաւորութիւն հազիւ ինքզինքը կրնայ մշտածել ու հոգայ ուր կը մնայ աքսորական եկեղեցականի մը վիճակն ու կացութիւն, որ ոչինչ է հանդէպ այդ դառն կացութեան մասնաւորապէս և ազգին տառապանքներուն ընդհանրապէս :

վճարուին իրեն այլև Պոլիս դառնալու թոյլտուութիւն ալ կ'ըլլայ և կայսերական շնորհներով կը լեցուի իր անձը : Երկաթեայ Պատրիարքը, Հայ Ազգին ու Եկեղեցւոյ շահերուն և իրաւանց բոլորանուէր տխոյեանը, մերժելով կը մերժէ այս տեսակ խայտառակ առաջարկները և նախամեծար կը համարի մնալ աքսորի կեանքին տառապանքներուն մէջ : Թէեւ Իզմիրլեան իր բացարձակ իրաւանց՝ այսինքն յետեալ օրինաւոր ամսականաց գանձման գործադրումը Ազգային կեդրոնէն պահանջած էր, սակայն արդիւնք մը չէր տեսնուէր : Իզմիրլեանի Եզրպտաբնակ բարեկամները քաջ գիտակ բոլոր այս ցաւալի պարագաներուն՝ հանգանակութեան մը ձեռնարկեցին այն ատեն և անոր առաջին արդիւնքը՝ յիշեալ 36 ասկին՝ դրկեցին իրեն, և կը շարունակէին հանգանակութիւնը, զոր սակայն դադրեցուցին Իզմիրլեանի այս նամակին վրայ :

Ն. Մ. Ա.

. . . Պարոն,

Երեկ ստացայ Ձեր Ամանորի և Ս. Եննդեան այնչափ առլցուն զգացմամբ շնորհաւորականն : Կարգացի նոյնը քանիցս և փղձկեցայ ի սիրտ և ի հոգի : Ազնիւ Հայ դաւակներուդ յայտնած այնքան նկատելի համակրանքն ո՛չ միայն կուգայ մխիթարել զիս աքսորականի դառն տառապանքներուս մէջ, այլ և քաջալերել ամէն պարագայի մէջ պատրաստ գտնուելու և կատարելու համար այն պարտականութիւնները, զոր համաձայն իմ ուխտին ու կոչման, ունիմ' առ բազմադարեան նահատակ ազգն իմ Հայ և Եկեղեցին : Պարտականութիւններ, զորս չեմ յաւակնիր ըսել թէ կատարած եմ, կրնամ սակայն սրտի ու հոգւոյ գոհունակութեամբ յայտարարել թէ սիրած եմ խղճմտութեամբ կատարել առանց երբէք անձնական և այլ այս կամ այն նկատումներու :

Աքսորի կապանքներուն տակ թէեւ ֆի-

զիքապէս հալած ու մաշած, բայց հոգիս պողպատային աշխուժեամբ տոկուն կը յուսայ և կը բաղձայ իսկ անձկանօք ապրիլ տեսնելու, տեսնելու համար միայն լաւագոյն օրերն Հայ ազգին, որ առիական անցեալ հազարաւոր տարիներու և մինչև ցարգ շարունակող անօրինակ բարբարոսութեան մէջ մէկ կողմէ ամենադառն մարտիրոսութեամբ եւ միւս կողմէ աննկուն տոկունութեամբ, գիտցաւ իր գոյութիւնն, ինքնագոյութիւնն մանաւանդ պահել անվժար ու անձեռնմխելի, զոր պիտի պահէ և յապայն:

Յ. Գ. — Գահիրէի մէջ հրատարակուած «Ժողովուրդ» ամսաթերթին առաջին թիւը ձեռքս անցաւ, սրտի քաղցր գոհունակութեամբ կարգացի, Պարոն Խմբագրին գծած հրապարասօսական ուղղութիւնն, քննադատել գործեր ու իրողութիւններ, և դատավճռել յետ ստոյգ քննութեան: Քննադատել նոյն պայմաններու մէջ ազատութիւնն իր բարձր նշանակութեան մէջ պահելու և զայն

օգտակար ընելու համար: Քննադատել բարքերն ու նկարագիրներն ազնուացնելու համար, և ոչ թէ անձնական անուանարկութեամբ զայնս ապականացման առաջնորդելու համար: Քննադատել վերջապէս Ազգային Օրէնքին — Սահմանադրութեան — մասնաւորապէս և ազգերը կառավարող օրէնքներուն ընդհանրապէս բարիքները վայելել տալու համար փարաօճական աշխարհի Հայ գաղութին ինչպէս և նոյնը կարգացող ամէն Հայու:

«Ժողովուրդ»-ի (*) Տէր և Տնօրէն Պ. Ս. Պալեանը անձնապէս չեմ ճանչնար, բայց ո՛վ ալ ըլլայ Հայ զաւակ մ'է, սրտիս հատորն է հաճեցէք խնդրեմ, իմ այս յետգրութիւնը կարդալ իրեն և յայտնել իմ խնդակցութիւնն և սիրալիր ողջոյնն ի Քրիստոս:

Կատարեալ յաջողութիւն կը մաղթեմ իր անձնական գործին և իր այդ ազգային ձեռնարկին:

(*) Յաւակի է որ «Ժողովուրդ»-ի կեանքը շատ կ'արճատեւ եղաւ: Ն. Մ. Ա.

... Աղաղարմ,

Ձեր Հոկտեմբեր 24 թուակիր նամակն ստացայ և անոր պարունակութեան վերահասու եղայ :

Երուսաղիմական խնդիրներն այն վիճակին հասած են այսօր որ անոնց վերլուծմանն համար լրագրական հրատարակութիւններն այլ եւս անբաւական են, միայն պաշտօնական անաչառ քննութիւն մը վերջ պիտի կրնայ դնել իրաց արդի ցաւալի վիճակին :

Պաշտօնական քննութիւն մը, անկողմնակալ քննութիւն մը միայն վանքին կանոնադրին ճշտիւ գործադրութիւնը պիտի ապահովէ, Տնօրէն ժողովոյ տարեկան համարատուութեան և հաշուետուութեան կանոնական կատարումը անվրէպ գործադրութեան դնել պիտի տայ և Լուսարարապետական խնդրոյն ու Ղեւոնդ վարդապետի քրահաճոյքներուն և տիրապետական ընթացքին վերջ պիտի դնէ : Պիտի կատարուի սակայն նմանօրինակ քննութիւն մը . . . :

Մեծայարգ թէլեան էֆէնտիի (*) պաշտօնին համար կըսուի թէ տեղեկատուութեան պայմանաւ պատուիրակութիւն մ'է, որու տեղեկագրին վրայ պիտի որոշուի քննութեան ո՞ւր և ի՞նչպէս կատարուիլը : Թէլեան էֆէնտի անկաչառ, օրինասէր և անփառասէր անձնաւորութիւն և քաջ գիտակ վարչական տնտեսական, ելեւմտական և կրթական գործառնութեանց, պայմանաց ու հանգամանաց, հետեւապէս օգտակար պիտի ըլլայ անշուշտ թէ Աղգային վարչութիւնն լրջատուութեամբ ձեռք առած է խնդիրն և ուղէ արդար քննութեամբ բառնալ զեղծումները և պատժել զեղծագործները :

Նամակիս հետ թղթատարին յանձնեցի կանոնադիր մը, որուն 32—33, 37 և 41^{րդ} յօդուածները տասը տարիէ ի վեր գործադրուած չեն, իսկ 48^{րդ} յօդուածը բնաւ գործադրուած չէ, ո՛չ թանգարան կայ եւ ո՛չ թանգարանապետ : Ձեռագիրները վանքին Ս. Թորոս եկեղեցիին դարաններու մէջ ամրա-

(*) Երկար տարիներէ ի վեր Պոլսոյ Աղգային Պատրիարքարանի Դիւանապետ : Ն. Մ. Ա.

փակ մնացած են եւն : 34^{րդ} յօդուածին տրամադրութեան հակառակ ելնոյց Տեսուչ Ղեւոնդ վարդապետ միանգամայն Տնօրէն ժողովոյ անդամ, ատենապետ, դիւանապետ, և իրական շինուածապետ եւայլն է : Տես 61 և 66^{րդ} յօդուածները : Անուանական շինուածապետ մը կայ, բայց իրականը Ղեւոնդ վարդապետն է :

Կանոնական սոյն դիտողութիւններն շատ համառօտ են, ամբողջը գրելու համար կանոնագրին չափ բան գրել պէտք պիտի ըլլար որ մասնաւոր ուսումնասիրութեան յատուկ գործ մ'է :

Ս. Էջմիածնէն հասած հրահանգին համաձայն պէտք եղածն ըրած էք, զոր գոհունակութեամբ կարդացինք : Հայասեր ենք ըտողներուն մի հաւատարք : Ձեր բանախօսութենէն (*) օրինակ մը անպատճառ զրկեցէք կ'սպասեմ :

(*) Ռուսիոյ Պետութեան կողմէ Հայ եկեղեցւոյ կալուածները գրաւուելուն առթիւ Գահիրէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ արտասանած էինք Բանախօսութիւն մը, որու մէկ օրինակը զրկուեցաւ վշտակիր աքսորականին՝ իր այս գրութեամբ յայտնած փափաքին գոհացում տալու համար :

Ն. Մ. Ա.

Ս. Երուսաղէմ, 6 Ապրիլ 1904

. . . Աղաղարմ,

Ստացած եմ ժամանակին Ձեր անցեալ նոյեմբեր 7 թուակիր նամակն և Ձեր տպագրեալ Բանախօսութիւնը : Գոհունակութեամբ սրտի կարդացի Ձեր Բանախօսութիւնն : Աղգային եկեղեցական կալուածոց յափշտակման հանդէպ ի պաշտպանութիւն աղգային եկեղեցական իրաւանց Ձեր նախանձաւորութիւնն, եւձանդը, փաստաբանելու մէջ ունեցած ձեռնհասութիւնը գնահատելի պիտի մնայ միշտ :

Տայր երկինք որ ամէն կողմէ եղած դիմումներն արդիւնաւոր հետեւանքի մը յանգէին :

.

Սիրելի Ազգաբարձ,

Սահմանադրութեան և վարչական ընթացքի հանդէպ երեւան ելած պարագայից նկատմամբ գրեցէք Ձեր հարցումներն. կը յուսամ կարելիութեան սահմանին մէջ գոհացնել Ձեր Ազնուութիւնն :

Գերազնիւ Սիրելի մեր ի Քրիստոս,

Նոր ստացայ Ձեր Ազնուութեան Փետրուար 14 թուակիր նամակն, կը վութամ Ազգային Սահմանադրութեան ինչ ինչ տրամադրութեանց մասին Ձեր ըրած հարցմանց պատասխանել :

Նախապէս հարկ կը համարիմ յայտնել թէ Ա. Պէրպէրեանի պատմութեան մէջ զետեղուած Սահմանադրութիւն, որ 1860 Մայիս 24ին միայն ազգովին ընդունուածն է, կայսերական իրատէով վաւերացուած և 1863 Մարտ 17 թուականաւ հրատարակուած արդի տիրող Ազգային Սահմանադրութեան հանդէպ այլ եւս Ազգային Օրէնք ըլլալէ դաւրած է և իր իրաւաբանական ոյժը կորսնցուցած :

1^o.— Առաջնորդ կամ Առաջնորդական Տեղապահ կամ Պատրիարքական և Առաջնորդական Փոխանորդ մը, որ կանոնաւորապէս ընտրուած կամ կարգուած է, Ազգային Կեդրոնական վարչութենէն վաւերացած և տիրող

կառավարութեան կողմէ հաստատուած է, և իբր այն Ազգային-Երեսփոխանական, կրօնական և Վաղարշական-Ժողովոյ կը նախագահէ, եւ անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ և տիրող կառավարութեան հետ ազգային խնդրոց վերաբերմամբ յարաբերութեան մէջ կը գտնուի՝ իրաւունք ունի քուէ տալու ազգային ժողովոց մէջ, ըլլայ քուէարկութիւնը գաղտնի կամ յայտնի, ըստ պարտաւորիչ չէ, ազատ է քուէարկութեան մասնակցելու կամ ոչ:

Ազգային ժողովոց մէջ երբ քուէի, Ձեր գրածին նման (*), հաւասարութիւն պատահի, նախագահն, ինչ որ ալ ըլլայ իր տիտղոսն, Ազգային Սահմանադրութեան 97^{րդ}, 87^{րդ} եւ 94^{րդ} յօդուածոց տրամադրութեանց և սկզբունց համաձայն ո՞ր կողմին մէջ գտնուի՝ այն կողմի քուէարկածն օրինաւոր որոշում կը հա-

(*) Այսինքն, զոր օրինակ ներկայներուն թիւը Նախագահով մէկտեղ ութ ըլլայ և խնդիր մը ձեռնուած պահուն չորս անդամներ կարծիք մը պաշտպանեն և երեք անդամներ ալ՝ ուրիշ կարծիք մը, և Նախագահն ալ այս վերջիններուն համակարծիք ըլլայ, այս պարագային ո՞ր կողմի կարծիքը պիտի ընդունուի իբր որոշում ժողովին և գործադրուի:

Ն. Մ. Ա.

մարտի, իսկ այն պարագային ուր Նախագահը այս կամ այն ժողովին ներկայ չգտնուի և նմանօրինակ քուէի հաւասարութիւն պատահի, օրինաւորապէս ընտրեալ Ատենապետը (ոչ թէ առժամեայ կարգեալ Նախագահը) ո՞ր կողմին մէջ գտնուի՝ այն կողմի որոշումն օրինաւոր կը համարուի: Հարկ է գիտնալ որ Նախագահն իր բացակայութեան տրուած որոշում մը, ինչ կերպով ալ տրուած ըլլայ այդ որոշումն, ըստ 97^{րդ} յօդուածի Ազգային Սահմանադրութեան, որմէ կը բղխի գլխաւորաբար և Նախագահին քուէ տալու իրաւունքը, կարող է և իրաւունք ունի իր գլխաւորութիւններովը խնդիրը վերստին նոյն այն որոշող ժողովին քննութեան յանձնել եւայլն, տես նոյն յօդուածը:

2⁰. — Ազգային Սահմանադրութեան 72^{րդ} յօդուածը թէեւ «Վանի երեսփոխան ուզուած է՝ այնքան անձանց անուն թղթի մը վրայ վերէն վար կարգաւ» գրել կը տրամադրէ, եւ ասով ըստ երեւոյթին այնպէս մը կը հակցուի թէ պահանջուած թիւէն պակաս անուն չպիտի կրնայ գրուիլ քուէթղթին վրայ, ըստ 78^{րդ} յօդուածն երբ «վերէն վար կարգաւ չգրուած քուէթղթերն» անվաւեր ըլլալ կ'օ-

րինադրէ, պակաս անուն պարունակող քուէ-
թղթերու մասին բան մը չ'տրամադրէր, ուր
եթէ պակաս անուն պարունակող քուէթղ-
թերն անխաւեր նկատէին օրէնսդիրք, տեղն
էր և պէտք էր այդ մասին տրամադրութիւն
մը աւելցնէին, զոր չեն ըրած և լուութիւն
պահած են: Այդ լուութիւնն կը նշանակէ և
կը տրամադրէ իսկ լուելեայն որ պահանջու-
ածէն պակաս — 10ի տեղ 7, 6, 5 և ըն. —
անուն միայն պարունակող քուէթղթերն ըն-
դունելի են: Ճիշտ այսպէս ալ գործադրուած
է միշտ Կ. Պօլսոյ մէջ:

Առաջին քուէարկութեամբ այս կամ այն
անձինք երեսփոխան ընտրուած ըլլալու հա-
մար 79^{րդ} յօդուածին տրամադրութեան հա-
մաձայն քուէարկուաց թուոյն կէսէն աւելի
— քուէից բացարձակ մեծամասնութիւն —
ստացած պէտք է ըլլան, իսկ երկրորդ կամ
համեմատական քուէարկութեան մէջ քուէից
առաւելութիւն կամ քուէից համեմատական
առաւելութիւն ստացողը 80^{րդ} յօդուածին ոյ-
ժով ընտրեալ կը համարուին, վասնզի 1863ի
արդի տիրող Ազգային Սահմանադրութիւնը
խմբագրողը կամ օրինադրողը միեւնոյն ան-
ձինքն եղած են, և նոյն այն 1860ի Սահմա-

նադրութեան վրայ կատարած են վերաքննու-
թիւնն և խմբագրած՝ 1863ի Ազգային Սահ-
մանադրութիւնը:

Եթէ Ազգային Սահմանադրութեան նոյն
օրէնսդիրք կամ խմբագրողը համեմատական
քուէարկութեան մէջ ալ քուէից բացարձակ
առաւելութեան հարկ տեսած ըլլային 1860ի
Սահմանադրութեան Չեր յիշած յօդուածը
նոյնութեամբ պէտք էր ընդունէին, այնպէս
չեն ըրած սակայն, այլ ընդհակառակն նոյն
յօդուածէն քուէից բացարձակ առաւելու-
թիւնն և երրորդ քուէարկութիւն օրինադրող
տրամադրութիւնները ջնջելով՝ յիշեալ 80^{րդ}
յօդուածը կաղմած և անով համեմատական
քուէարկութեան մէջ իրրեւ ընտրող ձայն
քուէից համեմատական առաւելութիւնն օ-
րինադրած են: Այսպէս գործադրուած է
ցարդ Կ. Պօլսոյ մէջ:

Ըստ իս այս է բանաւոր և տրամաբա-
նական և իրաւաբանական մեկնութիւնն Ազ-
գային Սահմանադրութեան այն կէտերուն,
որոնց նկատմամբ ուղած էիք գիտնալ իմ
հասկացողութիւնն և բացատրութիւնները:

... Սիրեցեալ իմ ի Տէր,

Կարգացի Ձեր Մայիս 5 թուակիր պատուական նամակը : Գիտեմ փարաւոնական աշխարհիդ մէջ մեր ազգային կացութիւնը փոխուած, գործերն ընդարձակուած և հոգերը բազմացած են, հետեւաբար և ազգային պաշտօնէից և մասնաւորապէս Ձեր գործունէութիւնը կարի ծանրացած է, ուստի և չեմ մեղադրեր զՁեզ երբ յաճախ չէք գրեր : Սիրեցեալդ իմ Պ. Աղազարմ, շնորհակալ եմ որ Ձեր այնքան բազմազբաղ փիճակին մէջ չէք մոռնար տարագիր փարգապետը և կուգար Ձեր պատուական գրութեամբ մխիթարել վշտակիր սիրտն ու հոգին այդ փարգապետին :

Ազգային գործոց ամենէն կարեւորը տնտեսական մատակարարութիւնն է, իսկ ամենէն նուիրականը Հայ երկսեռ մանկութեան դատարակութիւնն է ընդհանրապէս և ազգային կրթութիւնն — Հայ լեզու, պատմութիւն և կրօնք — մասնաւորապէս : Վարչական մարմին մը երբ Ազգային Օրէնքն ուղղեցոյց ու-

նենալով կը գործէ այն ատեն միայն օգտակարապէս կը ծառայէ ազգին : Ազգին Օրէնքն անտեսող վարչութիւնն պէտք է դիտնալ որ պատուհաս մ'է, բռնակալութիւն մ'է, որ կը կոխտէ ամէն ազգային և անհատական իրաւունք և պարտք եւ ուր իրաւունքի և պարտքի գիտակցութիւնն և յարգանքը կը պակսի՝ հոն օրէնքն և արդարութիւնն և ազգային գործոց բազձայի կանոնաւորութիւնը գոյութիւն ունենալէ կը դադարին, և գործերը քահանայի և գործունէութիւնն ալ դանդաղութեան կը մատնուին : Օրէնքը յարգելը գործունէութեան մղում տալ է, վասն զի հակառակ պարագային օրէնքը պատասխանատուութեան կը հրաւիրէ գործողն և կը դատապարտէ իսկ՝ այն իրաւունքով և ոյժով, որ իրմէն՝ Օրէնքէն կը բղխի :

Այս տողերն իբրեւ հրահանգ չէ որ կը գրեմ, այլ օրինաց մասին իմ հայեացքը կը փորձեմ պարզել համառօտակի : Համոզուես թէ՛ առանց օրէնքի խլճամլտ գործադրութեան՝ ազգային գործերն — տնտեսական, կրթական, յարաբերական և վարչական գործերն — չեն կրնար օգտակար և յաջող վիճակի մէջ գտնուիլ :

... Պարոն,

Երէկ իրիկուն ուշ ատեն ստացայ Ձեր Աղնուութեան 2 Օգոստոս թուակիրն:

Խորին շնորհակալութիւն այն համակրանաց համար, զոր կը յայտնէք յանուն Եգիպտաբնակ Հայ պատուական ժողովրդեան:

Բերկրապատար խնդութեամբ լեցուած եմ Հայ, Յոյն, Թուրք, Պուլկար եւայլն բանտարկեալ և աքսորեալներու ազատման, եւ մխիթարուած եմ մասնաւորապէս մեր Հայ զաւակներու տառապանքներէ աշատման եւ Հայաստանի նահանգաց գոնէ մինչեւ աստիճան մը անդորրացման շաւղին մէջ մտած ըլլալուն համար: Այս ընդհանուր ներուժէն ես միայն բացառութիւն նկատուած եմ, ո՛չ միայն արգիլուած եմ տեղէս շարժելու այլ եւ յատուկ խաւիէ մը յատկացուած է ինձ համար տեղւոյս կառավարչին կողմէ. Պօլսոյ Պատրիարքարանէն տակաւին բան մը չը հաղորդուեցաւ ինձ, բայց դարձեալ կ'ըսեմ ուրախ եմ բոլոր բանտարկելոց, աքսորելոց եւ


տարագրելոց ազատման համար, և նոյն ուրախութեամբ մխիթարուած՝ աքսորական կեանքը պիտի շարունակեմ տանիլ սիրով, համբերութեամբ և ուրախութեամբ և արիութեամբ, ինչպէս մինչեւ հիմա տարի: Ձըլլայ որ վերի տողերը լրագրայ մէջ հրատարակել տաք, հակառակ պարագային վիճակաւ եւրի կը դառնանայ անշուշտ:

Ս. Երուսաղէմ, 25 Յուլիս 1908

... Պարոն Աղաղարմ,

Ուր ուրեմն մեր բողոքին վրայ երէկ Յուլիս 24 Կ. Պոլիս երթալու անցագիր ստացայս եթէ Տէրը կամենայ Օգոստ. 13 Չորեքշաբթի օրը պիտի մեկնիմ Յոպպէէն դէպ ի Կ. Պոլիս: Շատ կը վափաքէի Եգիպտոս հանդիպելով շարունակել ճամբաս, սակայն ինձ դէմ յարուցեալ դժուարութիւններուն հետեւանօք խոհեմութիւնը ձեռքէ չը թողուլ կարեւոր համարեցի, ուստի ուղղակի Կ. Պոլիս պիտի երթամ:

Ձեր նամակներն ներփակ հասցեով ուղղեցէք, անվլաս ձեռքս կը հասնի:



ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Լ ահաւանելի Կաթոլիկ Աստուծոյ Եպիսկոպոսոց եւ
Կաթոլիկոս առնայն Հայոց Մայրաքոյն Պարբերի համալ-
բայն Նախախնայ Արքեպիսկոպոս Աստուծոյ Մայր
Եկեղեցոյ Սրբոյ Կաթոլիկ Էջֆառնի:

ԳԵՐԱԶՆԻԻ Պ. ՄԿՐՏՉԻ Ս. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ
Կ. Պոլսեցւոյ հարազատ Որդւոյ Մայր Աթո-
ռոյս և քիրելի դաստիարակին խնոյ նուիրելիք
ողջոյն հանդերձ հայրապետական օրհնու-
թեամբ:

Ընկալեալ Մեր զգիր պատուականութեան

Զերոյ, զտողեալն 'ի 5 ամսեանս Սեպտեմբերի (ն. Տ.) ի մայրաքաղաքէն Փարիզ, մխիթարեցաք ի հոգի, զի հասու եղաք քաջառողջութեան ծերունազարդ ուսուցչիդ, որ շուրջ զիւրեւ պատեալ զսիրասուն զաւակունս, զթոռունս և զամենայն պարագայս յ 316 անցելոյ Օգոստոսի ի Փարիզ մայրաքաղաքի և ի Կ. Պօլիս կատարեալ է զտօն հոլովման քառամնամեայ բաղդաւոր ամուսնութեան յընտանեկան շրջանի :

Արդ՝ հաղորդակից լեալ մեր ուրախութեան լծակից ամուսնոյդ, ողջոյն օրհնեալ գերդաստանիդ և համայն տոհմիդ պարագայիւք հանգերձ, այսու հայրապետական կոնդակաւ մերով օրհնեմք զՁեզ, զսիրասուն զաւակունս, զթոռունս և զամենայն պատուական զարմս տանն Մեզպուրեան :

Եւ մաղթեմք առ Տէրն Տերանց, որ տըւիչն է ամենայն բարեաց, պարգեւել պատուական ամուսնոյդ ի մուտս արեւու Զերոյ զբարեբաստ և զանփորձ աւուրս առ ի թեւակոխել ի շրջան յիսնամեկի ամուսնութեան Զերոյ, վասն ի կատար ածելոյ զիղձս զաւակաց և համայն տոհմիդ, որք փափաքին եւ խոստանան տօնել զոսկեղէն Յոբելեան յիս-

Նամեայ տարեդարձի ամուսնութեան Զերոյ :
Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ, Ամէն :

ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂՈՒՆՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

21 Սեպտեմբերի 1910 ամի
Եւ ըստ Տօմարիս ՌՅԾԹ
Ի Հայրապետեան մերում Ա. ամի
յկերաքեան Մ. Արոս Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ

Թ. 1986



11

[Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page]

« Ազգային գրադարան



NL0172104

Գրեյկս կը վանառուի Արաբկիրի Կրթասիրաց
Միութեան ի նպաստ :

Գինն է 100 փարա :

Աւելի վնարուածները իբր նուիրատուքիւն
կ'արձանագրուին :

Հասցէ՝

Union Armenienne Grtassiratz d'Arabkir

Boite Postale N° 489

LE CAIRE

